

Բ. Ա. Կոտաճյան

ՓՈՇՈՏՄԱՆ ՏԱՐԲԵՐ ԶԵՎԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՄԱՏԻ ԲՈՒՅՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մեր նպատակն է եղել պարզել մեկուսացված ինքնափոշոտման վնասակարությունը և ներսորտային խաչաձևման օգտակարությունը տոմատի մի քանի սորտերի մոտ:

2. Դարվիճը [1] ցույց է տվել, որ ոչ մի օրգանական էակ անընդհատ չի սահմանափակվում ինքնափոշոտումով, այլ անհրաժեշտ պահանջ է զգում բնդմնավորվելու ուրիշ ծաղկավառիով և ժամանակ առ ժամանակ էլ բնդմնավորվում է խաչաձև:

2. Դարվիճը [4], ինչպես և Տ. Դ. Լիսենկոն [7] նշում են, քանի որ հարկավոր ինքնափոշոտման ժամանակ իրական և արական գամետաների ձևավորումը կատարվում է համեմատաբար նույնանման պայմաններում, միևնույն ծաղկի մեջ և համարյա թե միաժամանակ, դրա հետևիվանքով էլ այդպիսի գամետաների միացումից ստացված օրգանիզմը ունենում է տվյալի ցածր կենսականությունը, ներսորտային խաչաձևման պետքում ինքնափոշոտվողների միևնույն տեսակին պատկանող անհատները զարգանալով համեմատաբար տարբեր պայմաններում, նրանց սեռական գամետաները այս կամ այն չափով ենթարկվում են դիֆերենցիալ ինքնափոշոտման արդյունքում և լարվում են ինքնափոշոտման արդյունքում:

2. Դարվիճը [4], Ի. Վ. Միչուրինը [9], Տ. Դ. Լիսենկոն [7] գտնում են, որ բնդմնավորման պրոցեսը, որպես օրգանիզմի ֆիզիոլոգիական պրոցեսներից մեկը, կատարվում է ընտրողականության հիման վրա, այստեղից էլ պարզ է, թե ինչու ներսորտային խաչաձևման պետքում ապահովվում է օրգանիզմի բարձր կենսականությունը:

Մի շարք հետազոտողներ հաաքրքրական արդյունքներ են ստացել ներսորտային խաչաձևման էֆեկտիվությունը ուսումնասիրելու կապակցությամբ:

Դ. Ա. Դուբոսինը [5], Ի. Ա. Տիմչենկոն [18], Մ. Ա. Բատարսկայան, Ն. Ի. Երմոլանան և Ա. Ն. Ստոլովը [3] նշել են, որ ցորենի տարբեր սորտերի ներսորտային խաչաձևումից ստացվում են ավելի բերքատու ձևեր:

Ֆ. Կ. Կոլպակը [6] նշում է, որ ներսորտային խաչաձևման հետևանքով ստացվել են աշնանացյան ցորենի ցրտադիմացիուն ձևեր:

Օ. Գ. Ալեքսանդրով [2], բակլամանի «Բոլդարսկի 014» և «Բիրյուչեկուտսկի 042» սորտերի վրա կատարված փորձերը ցույց են տվել, որ ներսորտային խաչաձևումից ստացվում են բերքատու և որակյալ ձևեր, համեմատած հարկավոր ինքնափոշոտումից ստացված բույսերի հետ:

Լ. Գ. Արտուտենյան [1] նշում է, որ բամբակենու ներսորտային խաչաձևման պետքում վարսանդի սպիի վրա տվյալի ճատ ծաղկավառի է ծլում, որ և ապահովում է բարձր տոկոս սերմերի ստացմանը: Հեղինակը նշում

է, որ այս մեթոդը պիտք է օգտագործել բաժնակենսու յափորակ և շատ սերմեր ստանալու համար:

Պ. Ֆ. Պիսեցկան և Ս. Ա. Դոբրովիցկայան [11] տոմատի մի շարք սորտերի ներսորտային խաչաձևումից F_1 -ին սերնդում ստացել են ավելի փաթեթավոր բույսեր: Այդ բույսերն ավելի վաղ են սկսել ծաղկումը և պրոդակալումը: Ընկ պտղում եղած սերմերի քանակն ավելի է եղել և ստացված սերունդն ավելի կենսական-արդյունավետ:

Վ. Ա. Լինիկը [8] տոմատի «Չուգոսինկա» սորտի ներսորտային խաչաձևումից F_1 -ին սերնդում ստացել է բույսեր, որոնք ավելի վաղ են սկսել ծաղկումը և պտղակալումը և ավելի քիչ տոկոսով են վարակվել բակտերային ռակով և դադաթային փառմոֆ, համեմատած հարկազիր ինքնափոշոտումից ստացված բույսերի հետ:

Ստացված բույսերը բերքն ավելացրել են մեկ հեկտարին 119 ցենտներով:

Ն. Ա. Սարգսյանի [12] աշխատանքները տոմատի մի քանի սորտերի վրա, ցույց են տվել, որ մեկուսացված ինքնափոշոտումը պակասեցնում է պտղակալման տոկոսը և սերմերի քանակը:

Ներսորտային խաչաձևումը, չնայած այն կատարվել է մեկուսիչների օգտագործմամբ, տվել է ավելի բարձր տոկոս պտղակալում, քան նույնիսկ բնական ինքնափոշոտումը:

Տոմատի մի քանի սորտերի հետ ներսորտային խաչաձևման մեր աշխատանքները սկսվել են 1951 թ. Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտում, բխողիական գիտությունների գոկոս-պրոֆեսոր Հ. Գ. Բատիկյանի ղեկավարությամբ:

Աստիճանաբար համար վերցվել են տոմատի հետևյալ սորտերը: Ջոլոտայա Կոբայա, Սալորաձև կարմիր, Շտամբովի № 31, Անահիտ, Լիկալս, Տանձաձև կարմիր:

Ոգտագործվել են փոշոտման հետևյալ վարիանտները:

1. Հարկազիր ինքնափոշոտում:
2. Ազատ փոշոտում:
3. Ներսորտային խաչաձևում:

Պտղակալումից հետո հաշվի է առնվել պտղակալման տոկոսը և մեկ պտղում եղած սերմերի քանակը:

Աստիճանաբար վերցվել է F_1 -ին սերնդում ստացված բույսերի ծաղկման, պտղակալման և հասունացման սկիզբը, արդյունավետությունը, պտղի բխողիական կազմը և սերմերի պահպանային նյութերի որակը առանձին վարիանտներում:

Արդյունակ № 1-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ պտղակալման տոկոսը հարկազիր ինքնափոշոտման դեպքում զրալի ցածր է, ցածր է նաև մեկ պտղում եղած սերմերի միջին քանակը ներսորտային խաչաձևման հետ համեմատած: Օր. «Ջոլոտայա Կոբայա» սորտի հարկազիր ինքնափոշոտումից ստացվել է 10 տոկոս պտղակալում, իսկ սերմերի քանակը հասել է 80-ի, ներսորտային խաչաձևման դեպքում ստացվել է 90 տոկոս պտղակալում, սերմերի միջին քանակը հասել է 91-ի:

«Անահիտ» սորտի հարկազիր ինքնափոշոտումից ստացվել է 10 տոկոս պտղակալում, սերմերի քանակը մեկ պտղում եղել է 66, մինչդեռ

Աղյուսակ 1

Տոմասի տարրեր ուրուերի պտղակալման տոկոսը և մեկ պտղի սերմերի միջին քանակը փոշոսման տարրեր ձևերով փոշուեցու դեպքում

1951 թ.

Ս ս ր ւ	Վ ա ր ի ա ն տ	Կասարադիա արմատ դիկաների քանակը	Պտղակալ- ման տոկոսը	Մեկ պտղում եղած սերմե- րի միջին քանակը
Զոլոտայա կոբուլևա	Հարկադիր ինքնափռոտում	25	10	80
»	Ազատ փռոտում	25	70	85
»	Ներստրտային խաչածնում	25	90	91
Սալորածն կարմիր	Հարկադիր ինքնափռոտում	25	40	50
»	Ազատ փռոտում	25	50	58
»	Ներստրտային խաչածնում	25	60	66
Շտամբովի № 31	Հարկադիր ինքնափռոտում	25	40	101
»	Ազատ փռոտում	25	65	105
»	Ներստրտային խաչածնում	25	80	106
Անահիտ	Հարկադիր ինքնափռոտում	25	10	66
»	Ազատ փռոտում	25	35	72
»	Ներստրտային խաչածնում	25	40	89
Միկադո	Հարկադիր ինքնափռոտում	25	—	—
»	Ազատ փռոտում	25	55	125
»	Ներստրտային խաչածնում	25	60	134
Տանձաձև կարմիր	Հարկադիր ինքնափռոտում	25	40	42
»	Ազատ փռոտում	25	70	43
»	Ներստրտային խաչածնում	25	70	45

Աղյուսակ 2

Տոմասի տարրեր ստրտերի ծաղկումը, պտղակալումը և հասունացումը, փոշոսման տարրեր ձևերով փոշուեցու դեպքում

1951—1952 թթ.

Ս ս ր ւ	Վ ա ր ի ա ն տ	Հաշվի առ- նելիս քա- նակը	Ս կ ի տ թ ը		
			Ծաղկ- ման	Պտղա- կալման	Հասու- նացման
Զոլոտայա կոբուլևա	Հարկադիր ինքնափռոտում	63	3/6	15/6	19/7
»	Ազատ փռոտում	60	1/6	14/6	17/7
»	Ներստրտային խաչածնում	66	27/5	12/6	5/7
Սալորածն կարմիր	Հարկադիր ինքնափռոտում	63	23/5	4/6	8/7
»	Ազատ փռոտում	45	23/5	3/6	5/7
»	Ներստրտային խաչածնում	54	21/5	1/6	3/7
Շտամբովի № 31	Հարկադիր ինքնափռոտում	60	1/6	13/6	18/7
»	Ազատ փռոտում	48	23/5	10/6	5/7
»	Ներստրտային խաչածնում	60	21/5	6/6	2/7
Անահիտ	Հարկադիր ինքնափռոտում	63	3/6	19/6	26/7
»	Ազատ փռոտում	63	27/5	3/6	10/7
»	Ներստրտային խաչածնում	63	23/5	11/6	18/7

Հարունակութուն 2-րդ աղյուսակի

Ս ո Ր Մ Ը	Վ ա Ր Ի ա ն Մ Ը	Հաշվի առ- նական բու- սանքի բա- նակը	Ս Կ Ի Վ Բ Ը		
			ձաղկ- ման	պաղա- կաման	հասու- նացման
Միկադո	Հարկադիր ինքնափոշո- տում	63	3,6	19,6	26,7
»	Ազատ փոշոտում	63	10,6	23,6	26,7
»	Ներսորության խաչա- ձևում	63	23,6	3,6	15,7
Տանձաձև կարմիր	Ազատ փոշոտում	63	21,5	3,6	10,7
»	Ներսորության խաչա- ձևում	63	23,5	3,6	7,7

Աղյուսակ 3

Տոճատի տարրեր սորտերի արդյունավետութունը փոշոտման տարրեր
ձևերով փոշոտելու ղեկավարում

1931—1932 թթ.

Ս ո Ր Մ Ը	Վ ա Ր Ի ա ն Մ Ը	Հաշվի առ- նական բու- սանքի բա- նակը	Բույսերի բարձրու- թյունը սմ-ով	Մեկ բույսի մեջ եղած պտուղների միջ. բան.	Մեկ բույսի մեջ եղած պտուղի մեջ. կգ-երով
Ջրոտայա կորուխ	Հարկադիր ինքնափոշո- տում	63	88,4	20,0	1857,0
»	Ազատ փոշոտում	60	91,4	22,0	1961,0
»	Ներսորության խաչա- ձևում	66	93,9	34,0	2742,0
Սալորաձև կարմիր	Հարկադիր ինքնափոշո- տում	63	70,1	149,0	1321,0
»	Ազատ փոշոտում	45	97,1	167,0	2076,0
»	Ներսորության խաչա- ձևում	54	97,6	171,0	2104,0
Շամպրովի № 31	Հարկադիր ինքնափոշո- տում	60	30,1	25,0	1795,0
»	Ազատ փոշոտում	48	39,1	31,0	2715,0
»	Ներսորության խաչա- ձևում	60	42,5	34,0	2858,0
Անահիտ	Հարկադիր ինքնափոշո- տում	63	73,0	21,0	1655,0
»	Ազատ փոշոտում	63	78,3	22,0	1817,0
»	Ներսորության խաչա- ձևում	63	116,0	47,0	2131,0
Միկադո	Հարկադիր ինքնափոշո- տում	53	70,0	19,0	2100,0
»	Ազատ փոշոտում	63	74,0	22,0	2414,0
»	Ներսորության խաչա- ձևում	63	104,0	119,0	961,0
Տանձաձև կարմիր	Ազատ փոշոտում	63	109,0	157,0	1255,0
»	Ներսորության խաչա- ձևում	63	120,0	212,0	1507,0

ներսորտային խաչաձևումից ստացվել է 40 տակոս պտղակալում, սերմերի միջին քանակը մեկ պտղում եղել է 89 հատ, Նույն օրինաչափությունը ստացվել է ուսումնասիրված մյուս սորտերի մոտ:

Աղյուսակ № 2-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ հարկադիր ինքնափոշոտումից F_1 -ում ստացված բույսերը ավելի ուշահաս են, քան ներսորտային խաչաձևումից և ազատ փոշոտումից F_2 -ում ստացված բույսերը: Օրինակ՝ Ջոլոտայա կորոլա սորտի հարկադիր ինքնափոշոտումից F_1 -ում ստացված բույսերի ծաղկումը սկսվել է 3.6-ին, հասունացումը՝ 19.7-ին իսկ ներսորտային խաչաձևումից F_1 -ում ստացված բույսերի ծաղկումը սկսվել է 27.5-ին, հասունացումը՝ 57-ին:

Անահիտ սորտի հարկադիր ինքնափոշոտումից F_1 -ում ստացված բույսերի ծաղկումը սկսվել է 3.6-ին, հասունացումը՝ 26.7-ին, իսկ ներսորտային խաչաձևումից F_1 -ում ստացված բույսերը իրենց ծաղկումը սկսել են 23.5-ին, իսկ հասունացումը՝ 18.7-ին: Այս նույն օրինաչափությունը ստացվել է մյուս ուսումնասիրված սորտերի մոտ:

Աղյուսակ № 3-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ ներսորտային խաչաձևումից F_1 -ում ստացվել են ավելի բերքատու և փաթեմա բույսեր, համեմատած հարկադիր ինքնափոշոտումից ստացված բույսերի հետ: Օր. Ջոլոտայա կորոլա սորտի հարկադիր ինքնափոշոտումից F_1 -ում ստացված մեկ բույսի պտուղների միջին քանակը եղել է 20, կշիռը՝ 1857 գր. բույսի բարձրությունը՝ 88,4 սմ., իսկ ներսորտային խաչաձևումից ստացված մեկ բույսի պտուղների միջին քանակը եղել է 34 հատ, կշիռը՝ 2742 գր., իսկ բույսերի բարձրությունը՝ 93,9 սմ.:

Աղյուսակ 4

Տարբեր ձևերի փոշոտումների ազդեցությունը տոմատի սերմերի պահեստային նյութերի վրա (1000 չոր սերմի կշիռը)

1951-1952 թթ.

Ս օ ր ւ ր	Վարիանտը	Ցուցանիշ	Սպիտակություն	Լուծվող բաժանիկ	Թանաքանք	Խոտանք
Ջոլոտայա կորոլա սորտի խաչաձևումից ստացված բույսերի № 31	Հարկադիր ինքնափոշոտ.	0,3869	0,3456	0,1157	0,2383	0,0451
	»	0,6996	0,5137	0,1079	0,3461	0,0504
	»	0,7422	0,4544	0,0995	0,3365	0,0551
Աղյուսակ կորոլա սորտի խաչաձևումից ստացված բույսերի № 31	Ազատ փոշոտում	0,5071	0,3240	0,0663	0,2162	0,0655
	»	0,8417	0,5443	0,0496	0,3842	0,0854
	»	0,5702	0,3681	0,0671	0,2773	0,0665
Ջոլոտայա կորոլա սորտի խաչաձևումից ստացված բույսերի № 31	Ներսորտային խաչաձևվ.	0,5780	0,4691	0,0937	0,2971	0,0689
	»	0,8685	0,5726	0,0902	0,4798	0,0831
	»	0,7799	0,4991	0,0967	0,3725	0,0723

Անահիտ սորտի հարկադիր ինքնափոշոտումից F_2 -ում ստացված մեկ բույսի պտուղների միջին քանակը եղել է 21, կշիռը՝ 1655 գր., իսկ բույսի բարձրությունը՝ 73 սմ.: Ներսորտային խաչաձևումից F_1 -ում ստացված մեկ բույսի պտուղների միջին քանակը եղել է 47, կշիռը՝ 2131 գր.: Բույսերի բարձրությունը՝ 116 սմ.: Նույն օրինաչափությունը ստացվել է ուսումնասիրված մյուս սորտերի մոտ:

Այդ նույն տարում ուսումնասիրվել է տոմատի Չոլոտայա կորուլեա, Սալորաձև կարմիր և Շտամբովի № 31 սորտերի սերմերի պահեստային նյութերի քանակը և պտղի փոփոկ մասի բխորձիական կազմը:

Աղյուսակ № 4-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ ներսորտային խաչաձևումից ստացված տոմատի սերմերի որակը (պահեստային նյութերը) բարձր են, համեմատած ազատ և հարկադիր ինքնափոշոտումից ստացված սերմերի որակի հետ: Օրինակ՝ Չոլոտայա կորուլեա սորտի հարկադիր ինքնափոշոտումից ստացված պտուղների սերմերի յուղերը եղել են 0,3869 գր., իսկ ներսորտային խաչաձևումից ստացված պտուղների սերմերինը՝ 0,5780 գր.: Սալորաձև կարմիր սորտի հարկադիր ինքնափոշոտումից ստացված պտուղների սերմերի յուղերը կազմում են 0,6996 գր., իսկ ներսորտային խաչաձևումից ստացված պտուղների սերմերինը՝ 0,8685 գր.: Չոլոտայա կորուլեա սորտի հարկադիր ինքնափոշոտումից ստացված պտուղների սերմերի սպիտակուլը կազմում է 0,3456 գր., իսկ ներսորտային խաչաձևումից ստացված պտուղների սերմերինը՝ 0,4604 գր.: Սալորաձև կարմիր սորտի հարկադիր ինքնափոշոտումից ստացված պտուղների սերմերի սպիտակուլը կազմում է 0,5137 գր., իսկ ներսորտային խաչաձևումից ստացված պտուղների սերմերինը՝ 0,5726 գրամ:

Եւ այն օրինաչափությունը ստացվել է Շտամբովի № 31 սորտի մոտ:

Աղյուսակ 5

Տարբեր ձևերի փոշոտումների ազդեցությանը տոմատի բխորձիական կազմի վրա

1951—1952 թթ.

Կոմբինացիայի և սորտի անունը	Չոլո	Չոլո նյութ	Ներսորտային խաչաձևումից ստացված պտուղների (հիդ. հետ)	Սալորա- ձև բարձր	Սալորա- ձև բարձր	Կոմբինացիայի բխորձիական կազմի	Փաշտումի- անունը	Մոխիր
Հարկադիր ինքնափոշո- տում								
Չոլոտայա կորուլեա . . .	90,36	9,64	5,24	6,05	0,18	0,76	0,51	0,63
Սալորաձև կարմիր . . .	90,99	9,01	5,17	4,91	0,25	0,49	0,32	0,44
Շտամբովի № 31 . . .	91,83	8,17	5,10	4,92	0,17	0,46	0,42	0,42
Ներսորտային խաչաձևում								
Չոլոտայա կորուլեա . . .	92,68	7,32	5,26	5,26	0,21	0,67	0,29	0,54
Սալորաձև կարմիր . . .	92,29	7,71	5,57	5,57	0,41	0,31	0,41	0,39
Շտամբովի № 31 . . .	93,04	6,96	5,29	5,29	0,19	0,40	0,33	0,35

Աղյուսակ № 5-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ ներսորտային խաչաձևումից ստացվել են ավելի սրակյալ, շաքարներով հարուստ, թթվությամբ աղքատ պտուղներ, համեմատած հարկադիր ինքնափոշոտումից ստացված պտուղների հետ: Օրինակ՝ Չոլոտայա կորուլեա սորտի ներսորտային խաչաձևումից ստացված պտուղների սախարոզան կազմում են 0,21 տոկոս, իսկ հարկադիր ինքնափոշոտման սախարոզան՝ 0,18 տոկոս: Ներսորտային խաչաձևումից ստացված պտղի թթվությունը կազմում է 0,67 տոկոս, իսկ հարկադիր ինքնափոշոտումից ստացված պտուղների

թթվությունը՝ 0,76 տոկոս, Սալորաձև կարմիր սորտի ներսորտային խաչաձևումից ստացված պտուղների սախարոզան կազմում են 0,47 տոկոս, իսկ հարկադիր ինքնափոշոտումից ստացված պտուղների սախարոզան՝ 0,25 տոկոս, ներսորտային խաչաձևումից ստացված պտուղների թթվությունը կազմում է 0,31 տոկոս, իսկ հարկադիր ինքնափոշոտումից ստացված պտուղներինը՝ 0,49 տոկոս: Նույն օրինակափոշոտային ստացվել է Շտամբուրի № 31 սորտի մոտ:

Մեր փորձերի տվյալներից կարող ենք զայն հետևյալ եզրակացություն.

1. ներսորտային խաչաձևման ժամանակ պտղակալման տոկոսը զգալիորեն բարձր է, բարձր է նաև մեկ պտղում եղած սերմերի միջին քանակը՝ համեմատած հարկադիր ինքնափոշոտման հետ:

2. I₁-ին սերնդում ներսորտային խաչաձևումից ստացվել է փոքահատ, փարթամ, բերքատու ձևեր, համեմատած հարկադիր ինքնափոշոտման հետ:

3. ներսորտային խաչաձևումից I₁-ում ստացված տոմատի թէ պտղի և թէ սերմերի օրակը (պահեստային նյութերը) բարձր են համեմատած հարկադիր ինքնափոշոտումից ստացված պտուղների և սերմերի օրակի հետ:

ՀՍՍՏ Գիտությունների ակադեմիայի Բույսերի
գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտ

Ստացվել է 28.11.1953

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Арутюнова Л. Г. Прорастанне пыльцы хлопчатника при внутрисортном скрещивании. Журнал „Яровизация“, 1 (28), 18—22, 1940.
2. Аверьянова О. П. Внутрисортное скрещивание баклажан. Журнал „Яровизация“ 1 (34), 106—108, 1941.
3. Бессарская М. А., Ермолаева Н. И., Ходьков А. Е. К характеристике растений пшеницы, полученных от семян внутрисортного скрещивания. Журнал „Яровизация“, 1 (28), 23—26, 1940.
4. Дарвин Ч. Действие перекрестного опыления и самоопыления в растительном мире. Пер. со 2-го англ. изд. д-ра В. А. Рыбина и Л. И. Козановской, 1939.
5. Долгушин Д. А. Борьба за дарвиновские основы семеноводства. Журнал „Яровизация“, 1, 37, 1939.
6. Ковалев Ф. К. Внутрисортное скрещивание и повышение морозостойкости озимых пшениц. Журнал „Яровизация“, 1, 53, 1939.
7. Лысенко Т. Д. Внутрисортное скрещивание и менделевский „закон“ расщепления. Журнал „Селекция и семеноводство“, 8—9, 1938.
8. Линник В. А. Результаты внутрисортного скрещивания томата. Журнал „Яровизация“, 6, 118—120, 1937.
9. Мичурин И. В. Сочинения, т. 1, 1939.
10. Мазилова А. Внутрисортные скрещивания гороха. Журнал „Яровизация“, 1 (34), 101, 1941.
11. Плещинский П. Ф. и Добровицкая С. А. Внутрисортное скрещивание помидор, как способ повышения их продуктивности. Журнал „Яровизация“ 1 (10), 1937.
12. Саркисян Н. С. Продуктивность растений томата при различных вариантах опыления. Известия АН Арм. ССР, том III, 9, 843, 1950.
13. Тимченко И. А. Наши первые итоги. Журнал „Яровизация“, 6, 117—118, 1937.

Б. А. Костанин

Влияние различных способов опыления на продуктивность растений томата

Р е з ю м е

Целью настоящего эксперимента являлось выяснение влияния изолированного самоопыления и внутрисортového скрещивания на продуктивность растений томата.

Были взяты следующие сорта томата: Золотая королева, Сливовидный красный, Штамбовый № 31, Анаит, Микадо и Грушевидный красный.

На основе результатов опыта можно прийти к следующим выводам:

1. При внутрисортovém скрещивании процент завязывания и количество семян больше, чем при принудительном самоопылении.

2. При внутрисортovém скрещивании в F_1 получились более раннеспелые, мощные и урожайные растения, чем при принудительном самоопылении.

Качество полученных плодов и семян (запасных веществ) томата в F_1 при внутрисортovém скрещивании сравнительно выше, чем качество плодов и семян, полученных при принудительном самоопылении.